ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 36

«13» 05 2022 թ. ք. Երևան

ԴԱՎԻԹ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Դավիթ Խաչատուրի Հակոբյանը ՀՀ դատախազության համակարգում աշխատում է 2020 թվականի սեպտեմբերի 15-ից: 2022 թվականի հունվարի 26-ից գործուղված է ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն: Իրավաբանական գիտությունների թեկնածու է:

Դավիթ Հակոբյանը 2020 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2022 թվականի հունվարի 25-ն ընկած ժամանակահատվածում հսկողություն է իրականացրել Երևանի կայազորի զինվորական դատախազության սպասարկման տարածքում արձանագրված՝ հանցագործությունների դեպքերով նախապատրաստվող նյութերով ու հարուցված քրեական գործերով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ, այնուհետև այդ քրեական գործերով պաշտպանել է մեղադրանքը դատարանում: Իր հսկողությամբ քննված քրեական գործերով, օրենքով սահմանված ժամկետում և կարգով, ստուգել է դատավճիռների և որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, կազմել եզրակացություններ, բողոքարկել է դատարանի օրինական ուժի մեջ չմտած անօրինական դատավճիռները և որոշումները, մասնակցել բողոքների քննարկմանը: Կազմել է օրինական ուժի մեջ մտած դատական որոշումներով բողոքարկման միջնորդություններ: Կազմակերպել է ստացված դիմումների քննարկումն ու ամփոփումը, քաղաքացիների ընդունելությունը:

Իր իրավասությանը վերապահված հարցերով կատարել է ստուգումներ, ուսումնասիրություններ, քննարկել և լուծել է քաղաքացիների, պաշտոնատար անձանց և իրավաբանական անձանց դիմումները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում իրականացրել է իր դատավարական ղեկավարման ներքո գտնվող քրեական գործերով անցնող քաղաքացիների ընդունելություն: Ամփոփել է մինչդատական քրեական վարույթի օրինականության, ինչպես նաև դատախազական հսկողության մյուս բնագավառների աշխատանքների կազմակերպման և իրականացման հարցերով ՀՀ գլխավոր դատախազի հրամանների և հանձնարարականների կատարման աշխատանքները, պատրաստել տեղեկանքներ, զեկուցագրերի նախագծեր, կազմել հաշվետվություններ:

Դավիթ Հակոբյանը հսկողություն է իրականացրել հետաքննության մարմինների ու ՀՀ ՔԿ ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչների կողմից ավարտված 295 նյութերի նախապատրաստման օրինականության նկատմամբ, որոնցից 5-ով վերացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և հարուցել քրեական գործեր:

Նշված ժամանակահատվածում հսկողություն է իրականացրել ՀՀ ՔԿ ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնում քննված 625 քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ, որոնցից 4 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 128 քրեական գործով վարույթը կարճվել է, 10 քրեական գործ ուղարկվել է այլ մարմին, 66 քրեական գործով վարույթը կասեցվել է, 289 քրեական գործ միացվել է այլ գործի: Հսկողություն իրականացրած քրեական գործերով տվել է 70 գրավոր ցուցում, կայացրել քննիչին քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին 18 որոշում, ներկայացրել քննիչի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ 16 միջնորդություն:

Դավիթ Հակոբյանի կողմից 1 քրեական գործով կայացվել է մեղադրական եզրակացությունը չհաստատելու և լրացուցիչ քննություն կատարելու համար քրեական գործը քննիչին վերադարձնելու մասին որոշում, 8 քրեական գործով կայացվել է վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու մասին որոշում, 2 քրեական գործով կայացվել է վարույթը կասեցնելու մասին որոշումը վերացնելու մասին որոշում: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում 6 քրեական գործով պաշտպանել է մեղադրանքը, որոնցից 2 քրեական գործով իր միջնորդությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով գործի վարույթը կարճվել է և քրեական հետապնդումը դադարեցվել, 1 քրեական գործով վարույթը կարճվել է վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով, իսկ 3-ը՝ դատաքննության ընթացքի մեջ են:

Դավիթ Հակոբյանը տիրապետում է հանցագործությունների քննության, քննչական գործողությունների կատարման, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության մեթոդիկային և տակտիկային: Տիրապետում է բնագավառը կարգավորող օրենսդրությանը: Օժտված է կազմակերպչական և ղեկավարման անհրաժեշտ ընդունակություններով, պարբերաբար ուսումնասիրում է օրենսդրությունն ու մասնագիտական գրականությունը, պարտաճանաչ է և կարգապահ, վայելում է աշխատանքային կոլեկտիվի հարգանքը:

Դավիթ Հակոբյանն ընթացք է տվել քաղաքացիների 10 դիմում-բողոքների, կատարել է 1 քաղաքացու ընդունելություն:

Դավիթ Հակոբյանը խրախուսանքներ և կարգապահական տույժեր չունի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Դավիթ Հակոբյանի անձնական և մասնագիտական բարձր որակները, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով, 50-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Անցկացնել Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ Դավիթ Հակոբյանի արտահերթ ատեստավորում՝ վերջինիս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու նպատակով:

Ա. ԴԱՎԹՅԱՆ